ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Արտ. Ավագյան

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԳՐՈՂՆԵՐԸ ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ

Ֆաշիզմը իմպերիալիզմի նեխման գագաթն է։ Այն երկրները, ուր հաստատվել է ֆաշիզմը, դարձել են դժոխավայր։ Գերմանիան ինքը մի բանտ է, համակենտրոնացման ճամբար։

Ֆաշիզմ ասելով հասկացվում է միայն սով, աղքատություն, բարբարոսություն ու պատերազմ։ Ֆաշիզմը դեմ է գնում պատմության առաջընթացին, նա ժողովրդին մղում է դեպի հետ, դեպի միջնադար։ Զափազանց ծանր կացություն են ապրում ֆաշիստական Գերմանիայի, ինչպես և ագրեսիայի ենթարկված երկրների աշխատավոր ժողովուրդները։ Ամենադժոխային ու ամենաէժան բանն անգամ դժվարությամբ են գտնում ֆաշիզմի ճիրաններում տառապող աշխատավոր ժողովուրդները։ Բավական է ասել, որ գերմանական գյուղացին, աղ չունենալու պատճառով, ձկան տակառներն է եռացնում աղ ստանալու համար, իսկ լուցկի չգտնելով, ամիսներ շարունակ նա կրակը թաղում է մոխրի տակ, ինչպես անում էր նախամարդը։ Այդ ծանր կացության մասին ստիպված խոստովանում է նաև ֆաշիստական մամուլը։ Ֆաշիստական բանտերում, համակենտրոնացման ճամբարներում խոշտանգվում, հաշմանդամանում և մեռնում են ժողովրդի լավագույն զավակները։ Միջնադարյան բարբարոսություններն աղոտանում են ֆաշիզմի տըմարդի, գազանային արարքների հանդեպ։ Ֆաշիզմը հոշոտում է բոլոր նրանց, ովքեր բողոքի ձայն են բարձրացնում անարդար կարգերի դեմ։

Գեստապոյի բանտերում բռնի կերպով թույն են սրսկում հակաֆաշիստներին, կտրում են կենդանի մարդկանց ձեռքերը, ջրահեղձ են անում նրանց, խարաններով կամ սրի ծայրերով բանտարկյալի կենդանի մարմնի վրա փորում են ֆաշիստական սվաստիկան։

Թվական տվյալները ցույց են տալիս, որ ֆաշիզմի տիրապետության կարճատև շրջանում, չհաշված նրա կողմից կազմակերպված պատերազմի դաշտում զոհվածների քանակը, կյանքի վատթար պայմաններում, բանտերում և աքսորավայրերում ավելի շատ մարդ է ոչնչացել, անհետ կորել ու հաշմանդամացել, քան պատմության որևէ ժամանակաշրջանում։

Ֆաշիզմը, խավարամոլության այդ թագավորությունը, թքում է մարդկության դարավոր կուլտուրայի վրա, ոչնչացնում է այն, իսկ դիմելով կուլտուրայի պատմությանը, խարդախում, կեղծում է Գյոթեի, Շիլլերի, Ֆիխտեի, Հեգելի ստեղծագործությունները։ Անցյալի հսկաները ֆաշիստական «գրականագիտության» մեջ դառնում են գաճաճներ։ Ֆաշիզմն անցյալից վերցնում է ամենառեակցիոն գրողներին։ Իսկական գիտության ու բա-

նականության փոխարեն առաջ է քաշվում զոոլոգիական, ռասայական ցընդարանություն։ Գերմանական ռասայի համաշխարհային տիրապետության հաստատումը աշխարհի բոլոր ժողովուրդների վրա — այս է ֆաշիզմի «թեորիայի» ուղն ու ծուծը։ Ֆաշիզմը կուլ է տալիս Արևմուտքի փոքր ժողովուրդներին, ոմանց բռնության ու արյան մեջ խեղդելով, ոմանց իր ցեղակիցը համարելով՝ ծառայեցնում է իբրև թնդանոթի միս։ Ֆաշիստական դպրոցներում պատանիներին սովորեցնում են գրքի փոխարեն սուր ունենալ, խմանալ մարդ սպանելու «արվեստը»։ Սովորեցնում են «արիական», «ոչ արիական», «մաքուր» և «ոչ մաքուր» արյան «թեորիան»։ Ֆաշիստ «գիտնականները» ռասայական «թեորիան» ապացուցելու համար դիմում են այնպիսի զավեշտական միջոցների, ինչպիսին են մեզի և մյուս սեկրեցիոն գեղձերի արտազրանքների լաբորատոր անալիզը։ Առաջնորդվելով այդ թեորիայով, ֆաշիզմը հալածում է իր տիրապետության տակ գտնվող հրեա, չեխ, լեհ, հույն, սերբ, բելգիացի և ուրիշ փոքր ժողովուրդներին։ Արտասահմանից Մոսկվա վերադարձած սովետական մի խումբ ինժեներներ ՏԱՍՍ-ի թղթակցի հետ ունեցած իրենց զրույցում պատմում են Հիտլերի գազանանոցում հալածվող ժողովուրդների մասին։ Բոլոր հրեաներն իրենց թևերին պետք է գրած ունենան «Հ» (հրեա) տառը։ «Հրեաներին թույլատրվում է խանութ մտնել միայն երեկոյան ժամը 5-ից հետո»— գրված է նրանց խանութների ճակատին — այն ժամանակ, երբ խանութներում ոչինչ չի գտնվում։ Նրանց արգելվում է երթևեկել տրամվայներով և ավտոբուսներով։ Հրեաներին արգելվում է մտնել հասարակական զբոսավայրերը։ Այգիների անկյուններում գրված են նստարաններ, որոնց վրա գրված է «Հ» (հրեա). հրեաներին թույլատրվում է նստել միայն դրանց վրա։

Ֆաշիստ բարբարոսները գրադարաններից հանում և հրի ճարակ են դարձնում բոլոր ուրիշ ժողովուրդների ստեղծագործությունները։ Կուլտուրայի այդ վանդալները հրի ճարակ են դարձնում հանճարեղ Հայնեի գրքերը, փշրում են նրա արձանը։

Ոճիրների արքա Հիտլերը հալածանքի ու աքսորի է դատապարտում գերմանական ժողովրդի այնպիսի զավակներին, ինչպիսին են Վիլլի Բրեդելը, Հ. Բեխերը, Էրնի Գլեզերը, Էգոն Էրվին Կիշը, Էմիլ Լյուդվիգը, Հենրիխ Մանը և այլն, արգելում է նրանց գործերի տպագրությունը։ Ֆաշիստական Գերմանիայի գրականությունն ապրում է խայտառակ անկում։ Իսկական կուլտուրայի փոխարեն բորբոսնում է այնտեղ նացիոնալիզմի և միլիտարիզմի «կուլտուրան»։

Գեոթեի, Հեգելի, Բեթհովենի, Շիլլերի հայրենիքի կուլտուրան, գիտությունը զարգանում են ֆաշիստական Գերմանիայից դուրս։ Սակայն Հիտլերի խարույկներն անզոր են այրելու մեծ գաղափարները։ Հիտլերը չի կարող բանտարկել ու՝ սպանել արևը, այդ արևը Մարքսի-Էնգելսի-Լենինի և Ստալինի ուսմունքն է, որի ճառագայթները թափանցում են ամեն տեղ։ Գերմանական հայտնի գրող Հենրիխ Մանը կուլտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսում ֆաշիստների մասին ասել է, որ ֆաշիզմը պայքարում է այն ամենի դեմ, ինչ ստեղծել է պատմությունը, և այն ամենի դեմ, ինչ ստեղծվել է վերջին շրջանում. «Նրանք ցանկանում են

տապալել և ոչնչացնել մարքսիզմը,— ասում է Հենրիխ Մանը,— սակայն մարքսիզմը անմերձենալի է հիմարների համար և մոտ է այն ժամը, երբ մարքսիզմը կտապալի հիմարների տիրապետությունը»։

*
* *

Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներից սկսած՝ ուժեղ վերելք է ապրում Արևմուտքի ռևոլուցիոն գրականությունը։ Ֆաշիստական սև սվաստիկայի տիրապետության բռնության ճնշման ներքո ծնունդ է առնում և զարգանում Արևմուտքի պրոլետարիատի, աշխատավոր ու առաջավոր մարդկության առաջադեմ գրականությունը։

Ռևոլուցիոն, հակաֆաշիստական գրողներն իրենց ստեղծագործություններում պատկերում են ֆաշիզմի ողջ ժահրահոտությունը։ Այդ գրողները ոգեշնչված սոցիալիզմի մեծ գաղափարներով, հայացքները հառել են աշխարհի մեկ վեցերորդ մասին, այն երկրին, որտեղ տիրում է ազատություն, հավասարություն և երջանկություն։ Ազգերի եղբայրական մեծ ընտանիքում ծաղկում է կուլտուրան, ծաղկում է գիտությունը։ Արևմուտքի ռևոլուցիոն գրողներն իրենց ստեղծագործություններում ռեալիստական գույներով են պատկերում հիտլերյան ժամանակաշրջանի մռայլ իրականությունը և այն վառվռունը, որ կա մեզ մոտ, որ պիտի լինի մոտ ապագայում՝ ամբողջ աշխարհում։

Մեր երկիրը ոգեշնչում է Արևմուտքի ռևոլուցիոն գրողներին, որպես փարոս, լուսավորում է նրանց ուղին։ «Մեզ բոլորիս համար,— գրում է Ջոն Սարեչին,— որ ապրում ենք կապիտալիստական աշխարհում, ՍՍՌՄ-ն մի փարոս է, որ լուսավորում է դեպի պրոգրեսը տանող ուղին։ Ամեն տարի ավելի ու ավելի պայծառ է վառվում այդ փարոսը։ Մենք հետևում ենք ՍՍՌՄ-ի ժողովուրդների գործունեությանը։ Մենք խորապես սքանչանում ենք նրանց հաջողություններով, տեսնում ենք, թե ինչպես մեկը մյուսի հետևից նրանք հաղթահարում են իրենց ուղու վրա եղած դժվարությունները։ Նրանք անշեղորեն գնում են դեպի առաջ»[1]։

Իսկ դանիացի կին գրող Կարին Միխայելիսը խոսելով համաշխարհային կուլտուրայի հայրենիքի — ՍՍՌՄ-ի մասին, կուլտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսում ասել է. «ՍՍՌՄ-ն ևրոպական մտքի մշակներին հավատք, ուժ և եռանդ է տալիս այն պայքարում, որ մղում են նրանք ամբողջ աշխարհին սպառնացող ֆաշիստական բարբարոսության դեմ»։

20-րդ դարի այդաբացին խավարի ֆոնի վրա բարձրանում են երեք վիթխարի դեմքեր — Մաքսիմ Գորկի, Ռոմեն Ռոլան և Հանրի Բարբյուս։

Մաքսիմ Գորկին հսկայական ազդեցություն ունեցավ Ռ. Ռոլանի և Հանրի Բարբյուսի վրա։ Նրանց ստեղծագործության ու պայքարի նպատակները նույնպես ժողովուրդների երջանիկ կյանքն է. «...Իմ արմատները հանդիպեցին Գորկու արմատներին,— գրում է Ռոլանը,— և նրանք եղբայրաբար հյուսվեցին իրար»։ Ռ. Ռոլանը հետևելով Գորկուն, գալիս է այն եզրակացության, որ «ժողովուրդը սկիզբներից սկիզբն է»։ Ռ. Ռոլանի պայ-

[1] „Интернациональная литература“ № 11, 1938 г.

քարող հոգին ծնեց կենսունակ, լավատես, լավագույն գաղափարներ արտահայտող, կյանքի սև մղձավանջի դեմ ընթացող, ստեղծագործող ու մահն սպանող տիպերի մի պատկերասրահ։

Դեռևս համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Գերմանիայի կայսերական զորքերն արյունլվա են անում Բելգիան, ավերում ու ոչնչացնում են Լուվենի գեղարվեստական հարստությունները, Հաուպտմանը ջատագովում է այդ բարբարոսությունը։ Ռ. Ռոլանը կշտամբելով Վերհարնին, վերջինիս հղած նամակում գրում է. «Ճակատագրի հետ չկապենք մեզ, Վերհարն, լինենք ճնշվածների հետ, բոլոր ճնշվածների հետ, որովհետև ամեն տեղ էլ ճնշվածներ կան»։ Ըստ Ռոլանի՝ կա միայն երկու դասակարգ—«մեկն այն է, որ ճնշված է, մյուսն այն է, որ ճնշում է», և կոչ է անում լինել առաջինների հետ, դուրս գալ իմպերիալիզմի ու պատերազմի դեմ։

Հոկտեմբերյան ռևոլուցիայի նախօրյակին լույս են տեսնում Հ. Բարբյուսի «Կրակ»-ը, Կուտյուրեի «Զինվորների պատերազմը» և ուրիշ գործեր։

Բարբյուսի «սարսափելի և ուրախ գիրքը» (Գորկի) ուղղված է պատերազմի հրձիգների դեմ։ Դև կապիտալը պատերազմի դաշտ է քշել զանազան ազգերի աշխատավոր զավակներին, որոնք ոչնչացնում են իրար՝ թաղվելով երկաթի կտորների հեղեղի ու ցեխի մեջ։ Բայց և այնպես, կեղտի ու արյան սև ֆոնի վրա բոցկլտում են մասսաների գիտակցության կրակները, մասսաները հասկանում են, որ մի կողմի հաղթանակը ոչ մի արդյունք չպետք է տա, որ պատերազմին վերջ տալու համար հարկավոր է ամբողջ պրոգրեսիվ մարդկության պայքարը պատերազմի դեմ։ —«... Հերոսնե՞ր ենք մենք, մի տեսակ արտակարգ մարդի՞կ։ Ո՛չ։ Մենք դահիճներ ենք եղել, պատվավոր կերպով կատարել ենք դահճի արհեստը։ Բայց մենք այդ արհեստը նորից կբանեցնենք, որովհետև չափազանց կարևոր է այն՝ պատերազմը պատժելու և խեղդելու համար»։ Արթնանում է հազար-գլխանի մասսայի գիտակցությունը—եղբայրաբար միանալու, ընդհանուր ուժ կազմելու համար։ Խավար ամպերի միջից փայլատակում է լույսը, բայց թախծալի և խղճուկ. կարծես թե, նա էլ մտածկոտ է մասսայի նման. «Լույսի այդ գիծը, որքան էլ տխրամած, դժգույն ու աղոտ լինի, այնուամենայնիվ ապացույց էր, թե արևը գոյություն ունի», այսպես է վերջացնում իր գիրքը Բարբյուսը։

Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում, Ամերիկայում և ուրիշ երկրներում առաջավոր գրողները պայքարի մի ընդհանուր ճակատ են կազմում ֆաշիզմի դեմ, շովինիզմի, ռասայականության ու պացիֆիզմի դեմ։ Ռոմեն Ռոլանի ճառերն ու կոչերը, Բարբյուսի մեղադրանքներն ու հոդվածները մերկացնում են ֆաշիզմի մարդակեր քաղաքականությունը և համայն մարդկության մեծագույն հույսը գտնում են «մարդկության առաջադիմության հենարան» ՍՍՌՄ-ի մեջ։ Արևմուտքի գրողները ոչ միայն պայքարում են ֆաշիզմի դեմ, այլև իրենց ստեղծագործություններով մասնակցում են սոցիալիզմի կառուցման մեծ գործին, նյութ ընտրելով մեծ Լենինի և Ստալինի կերպարը, կարմիր Մոսկվան, մեր սոցիալիստական շինարարությունը (Հ. Բարբյուս—«Ստալին», Ի. Բեխեր—«Հնգամյակ» և այլն)։ «Ֆաշիզմը,—գրում է Ռոմեն Ռոլանը,—դա վերջին ցնցումն է, դուցե մահա-

ցու ցնցումը կապիտալիստական ռեակցիայի։ Ամբողջ ժահրահոտությունը նեխված ռեժիմի, որը թունավորում է քաղաքական կյանքը և ամբողջ պետական օրգանիզմը։ Իմպերիալիզմը, նացիոնալիզմը, ռասիզմը, գաղութային բանդիտիզմը—սրանք բոլորը հրեշային ձևեր են, փտած աֆերիստություն նողկալի իդեոլոգիայի, որը գործի է դրված տասնապատկված ձևերով։ Եղեք զգաստ, այս կոչն ուղղում եմ ամբողջ աշխատավորությանը, պրոլետարիատի միլիոնավոր ձեռքերին ու մտքին, որը մնում է հավատարիմ ինքն իրեն, այսինքն՝ պրոլետարիատի գործին։ Այս կոչն ուղղում եմ ռևոլուցիոն գրողներին և արվեստագետներին։ Պայքարը ֆաշիզմի և մեր միջև ոչ թե կյանքի, այլ մահվան համար է։ Հիշենք Վոլտերի խոսքերը՝ «Ջարդենք այդ գազելիներին»[1]։ Իսկ ՍՍՌՄ այցի գալուց հետո (1935 թ.) հիացած մեր երկրի վերելքով, ընկեր Ստալինին հղած իր նամակի մեջ գրում է. «Ես մեկնում եմ այն խորը համոզումով, որ ես նախազգում էի այստեղ գալով—որ միակ իսկական համաշխարհային առաջադիմությունն անխզելիորեն կապված է ՍՍՌՄ-ի ճակատագրի հետ, որ ՍՍՌՄ-ն պրոլետարական ինտերնացիոնալ հրաբորբոք օջախ է հանդիսանում, որպիսին պետք է դառնա և կդառնա ամբողջ մարդկությունը, որ ամեն երկրի պարտքն է պաշտպանել այդ երկիրը նրա վերելքին սպառնացող բոլոր թշնամիներից»[2]։

ՍՍՌՄ-ի հաղթանակի ամեն մի տարին ոգևորում ու խնդությամբ է լցնում բոլոր առաջավոր մարդկանց սրտերը, նրանք ապրում են մեր վերելքով և ցանկանում են էլ ավելի նրա բարգավաճումն ու ծաղկումը, որովհետև մեր երկիրն առաջնորդում է աշխարհի բոլոր ժողովուրդներին։ «ՍՍՌՄ-ն մի ելակետ է ու հենարան ֆաշիզմի դեմ մղվող պայքարում»[3],—գրում է Մ. Ա. Նեքսեն։

Ռոմեն Ռոլանը ողջունելով ՍՍՌՄ-ի քսան տարին, գրում է. «... Դուք, սովետական ընկերներ, բարձրացրիք ջահը, որ ընկել էր մեր ձեռքից, և ձեր մեծ Լենինի ձեռքում, որ վառեց բոցը, ազատության լույսը փայլատակեց ամբողջ աշխարհում։ ...Նոր աշխարհը, որի մասին երազում էինք մենք, այժմ կառուցում եք դուք։ Ողջույն Ստալինին. ստեղծագործողին և ձեզ բոլորիդ, միլիոններիդ, որ կառուցում եք ազատ ու հավասար, բոլորի բարգավաճման համար կատարվող, բոլորի աշխատանքի հպարտ խնդությամբ լի բոլոր ժողովուրդների պրոլետարական մեծ միությունը։ Այժմ, չնայած վերջին տարիների արյունալի ստվերներին, երբ մնացած աշխարհում սկսվեց ժողովուրդների մահացու պատերազմը ֆաշիզմի դեմ, ձեր օրինակը և հավատքը ՍՍՌՄ-ում առաջնորդում են ժողովուրդներին։ Ձեր հուժկու ամրությունը, որ բարձրանում է Եվրոպայի և Ասիայի վրա, նրանց համար ծառայում է որպես հենարան»[4]։

Այն պատերազմը, որ մղվում է արյունարբու ֆաշիզմի դեմ, արդարացի պատերազմ է բոլոր ռևոլուցիոն գրողների համար։ Լենինյան-ստալինյան լոզունգը՝ իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի՝ մեծ արձագանք է գտել Արևմուտքի գրողների մեջ.

---

[1] «Գրական թերթ» № 20, 1934 թ.։

[2] „Литературная газета", № 41, 1935 г.

[3] „Интернациональная литература„ № 11, 1937 г.

[4] Նույնը։

նրանք իրենց բոլոր գեղարվեստական գործերով ծառս են եղել անարդարացի պատերազմի դեմ, ֆաշիստական դատարանի բարբարոսության դեմ։ Բարբյուսի «Կրակ»-ը, Պ. Վ. Կուայուրեի «Զինվորների պատերազմը», «Արձակուրդում», Վ. Բրեդելի «Փորձությունը», Մալրոյի «Մարդկային վիճակը» և այլն, այս բոլորի կլասիկ օրինակներն են հանդիսանում։

Ըստ նրանց՝ հարձակվել ՍՍՌՄ-ի վրա, նշանակում է հարձակվել ամբողջ աշխարհի կուլտուրայի ու գիտության վրա, որովհետև ՍՍՌՄ-ն է հանդիսանում մարդկային ողջ կուլտուրայի իսկական ժառանգորդն ու կրողը, ՍՍՌՄ-ն է հանդիսանում գիտության ծաղկման հայրենիքը։ Եթե ֆաշիզմը կրակի ճարակ է դարձնում մարդկային առաջադիմական մտքի արդյունքները, փշրում է արվեստի սքանչելի կոթողները, հանճարեղ ստեղծագործողների արձանները, ապա ՍՍՌՄ-ում մշակվում, ուսումնասիրվում ու հազարավոր տիրաժներով տարածվում են այդ գրքերը, կանգնում են արվեստի նոր կոթողներ ու արձաններ՝ մտքի մշակների հիշատակին. «Կոմունիզմն ու կուլտուրան,—ասել է հոլանդացի ռևոլուցիոն գրող Ժեֆ Լաստը կուլտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսում,—իրարից անբաժանելի են, ինչպես ֆաշիզմը բարբարոսությունից և պատերազմից»։

Ֆաշիզմը ոչնչացնում է փոքր ազգերի կուլտուրան, իսկ ՍՍՌՄ-ում ծաղկում է ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական, մեծ գաղափարների, մեծ կուլտուրան։ Նույն կոնգրեսում Հ. Բարբյուսը խոսելով, թե ինչպես ֆաշիզմը ոտնատակ է անում մարդկային մտքի գեղեցիկ պտուղները, հալածում է մտքի մարդկանց, խեղդում է փոքր ազգերի կուլտուրան, ՍՍՌՄ-ի մասին ասել է. «Մենք այնտեղ տեսնում ենք բոլոր ազգային կուլտուրաների տոնն ու հաղթանակը»։

ՍՍՌՄ վրա գերմանական ֆաշիզմի կատարած ավազակային հարձակումից հետո, ավելի ցասումնալից ու մարտունակ է դառնում գրչի ու մտքի մարդկանց պայքարը ֆաշիզմի դեմ։ Գրողներից շատերը կոչ են անում աշխարհի բոլոր առաջավոր գրողներին՝ թողնել գրիչը և զենքով պայքարել ֆաշիզմի դեմ՝ ՍՍՌՄ-ը պաշտպանելու համար։ «Պայքարի ներկա էտապում,—գրում է Վայան Կուայուրեն,—ռևոլուցիոն գրողները և արվեստագետներն ուզում են լինել միայն շարքային մարտիկներ։ Նրանց համար պատիվ է լինել այն մարդկանց շարքերում, որոնց ֆաշիստական մամուլը չի ղլանա անվանել «խուլիգաններ» և «մութ էլեմենտներ բանվորական արվարձանից»[1]։

Ռևոլուցիոն բոլոր գրողները ճշմարտացի կերպով գնում են այն խնդիրը, որ մարդու շահագործումը մարդու կողմից կարող է վերանալ միայն այն ժամանակ, երբ կկործանվի իմպերիալիզմի վիժվածք ֆաշիզմը։ Ազատություն, խաղաղություն երբեք չի կարելի պատկերել առանց Հիտլերի կործանման։ Ահա թե ինչ է ասում Վ. Բրեդելը այդ մասին. «Եթե պետք է ժողովուրդների միջև խաղաղությունն ամրանա, ապա Հիտլերը պետք է տապալվի։ Եթե պետք է նվաճվի գերմանական ժողովրդի ազատությունը, ապա Հիտլերը պետք է տապալվի։ Որպեսզի վերացվի մարդու շահագործումը մարդու կողմից, ապա Հիտլերը պետք է տապալվի։ Որպեսզի գերմանական

[1] «Գրական թերթ», № 20, 1934 թ.։

ժողովուրդը և մյուս ժողովուրդները կարողանան գոյություն ունենալ, Հիտլերը պետք է տապալվի»[1]: Ոչինչ չխնայել ֆաշիզմը ջախջախելու համար. ամեն մի օրինավոր և առաջավոր մարդ, որի համար թանգ է մարդկային կուլտուրան և ինքը՝ ստեղծագործող մարդը, «խոսքով ու գործով, գրչով և զենքով, մինչև արյան վերջին կաթիլը» (Բարտա Լասկ) պետք է դուրս գա ընդդեմ ֆաշիզմի և կանգնի ՍՍՌՄ-ի կողմը։

Արևմուտքի բոլոր ռևոլուցիոն գրողները կանգնած են ՍՍՌՄ-ի կողմը, որովհետև, ինչպես ասում է Լ. Ֆոյխտվանգերը, «ողջ աշխարհի ինտելիգենցիան իր փրկությունը տեսնում է ՍՍՌՄ-ի մեջ»։ «Սովետական Միության աշխատավորները, —գրում է Ըպտոն Սինկլերը,—պետք է հիշեն, որ միլիոնավոր առաջավոր մարդիկ զգվանքով են վերաբերվում ֆաշիզմի բոլոր արտահայտություններին, նրանք ողջ սրտով ՍՍՌՄ-ի հետ են, որը անշեղորեն հակադրվում է ժամանակակից բարբարոսությանը»[2]։

Արևմուտքի ռևոլուցիոն գեղեցիկ գրականությունը գերազանցապես սոցիալական—քաղաքական է։

Արևմուտքի ռևոլուցիոն գրողները ցնցող կերպով նկարագրում են ժողովրդի լավագույն զավակների տանջանքները ֆաշիստական բանտի ու դատարանի կողմից (Անդրե Մալրո—«Արհամարհանքի տարիներ», Վ. Բրեդել—«Փորձություն»)։ Այդ նկարագրություններում երևում է ֆաշիստ բարբարոսների ողջ ցինիզմն ու ոչ-մարդկային էությունը, որով և միաժամանակ մերկացվում է ֆաշիստական ավազակապետության առօրյան։ Սակայն բանտում չեն մեռնում տանջվողների հոգիները. ընդհակառակը, ավելի ամրանում և արիանում են, լցվելով վրեժխնդրությամբ ու ատելությամբ։ Բանտից ազատվողները չեն դադարեցնում պայքարը։ Նրանք, երկաթյա կամքի այդ տիտանները, ազատ կյանք դուրս գալուց հետո, ունենալով պայքարի նպատակի պարզ գիտակցությունը, ավելի են ծավալում պայքարը ֆաշիստական գազանաբարո կարգերի դեմ (Ա. Մալրո—«Արհամարհանքի տարիներ», Վ. Բրեդել—«Փորձություն»)։

Վիլլի Բրեդելը իր «Քո անծանոթ եղբայրը» գործի վերջին մասում հերոսին կոչ է անում՝ «Խիզախ, Առնոլդ—ավելի խիզախ։ Դու պայքարում ես մեծ, ճշմարիտ գործի համար։ Դու ամենաբազմամարդ բանակի զինվորն ես, աշխարհում ամենահուժկու, ազատության համար պայքարողների բանակի։ Այսպես ուրեմն, ավելի խիզախ, Առնոլդ»։

Հակաֆաշիստական արձակի հետ համահավասար զարգանում են գրական մյուս ժանրերը, հատկապես չափածո խոսքը—քաղաքական պոեզիան։ Արևմուտքի ռևոլուցիոն գրողները շարունակելով Հայնեի, Շելլիի, Բերանժեի և չարտիստական պոեզիայի լավագույն տրադիցիաները, ավելի մարտունակ են դարձրել չափածո խոսքը։

Ինչպես արձակում, այնպես էլ չափածո խոսքի մեջ ռևոլուցիոն բանաստեղծները նկարագրում են ֆաշիստների ռեժիմը, նրանց կատարած ավերն ու թալանը, մանր ժողովուրդների նկատմամբ կատարած գազանությունները, ապա ժամանակավորապես պարտված, բայց չհնազանդված

1 „Интернациональная литература“ № 12, 1938 г.

2 Նույնը։

ժողովրդական մասսաների հուզմունքն ու պայքարը մարդակեր ֆաշիզմի դեմ։

Գերմանացի նշանավոր գրող Հ. Բեխերը իր «Զապայ» բանաստեղծության մեջ զգուշացնում ու կոչ է անում ռազմական արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին թողնել աշխատանքը ու դուրս գալ ֆաշիզմի ու պատերազմի դեմ.

Դու դեռ բանում ես, բանվոր ընկեր,
Բայց չգիտես, թե
Ինչի համար...
Բեռնում ես ծանր թնդանոթներ
Եվ ուղարկում ես
Բեռներով մահ—
Քո եղբայրներին դեպի Զապայ։

Բեխերը կոչ է անում Եվրոպայի ողջ պրոլետարիատին դուրս գալ եղբայրասպան պատերազմի դեմ — ֆաշիզմի կազմակերպած աշխարհավեր պատերազմի դեմ.

Բանվոր, ձգիր դու գործ, գործարան,
Ելիր ըմբոստ և ասա նրանց,
Ես չեմ սպանի ինքս ինձ,
Ես չեմ սպանի եղբայրներիս։

Հ. Բեխերը իր մի հոդվածում հավատացնում է բանվորներին, որ ողջ առաջավոր մարդկությունը, բոլոր առաջավոր գրողները, գիտնականները աշխատավոր մասսայի հետ են, որ ոչ ոք չի խնայի իր կյանքը հանուն կարմիր ապագայի մղվող պայքարի համար. «Բազմահազար բանվորներն արդեն գիտեն,—գրում է Հ. Բեխերը,—որ մենք, ռևոլուցիոն գրողներս, պատկանում ենք իրենց, որ մենք մեր ստեղծագործությունները դարձրել ենք անհրաժեշտ զենքեր և զինանոց դասակարգային պայքարի համար։ Մենք զինվորներ ենք, զինվորներ՝ մեծ, ինտերնացիոնալ կարմիր բանակի»[1]։

* * *

Գերմանական ֆաշիզմը, ինչպես Գերմանիայում, այնպես էլ հարևան երկրներում տարածելով սով, ավերածություն ու մահ, ոչնչացնելով սեփական երկրի կուլտուրան, իր արնոտ թաթն է մեկնել համաշխարհային կուլտուրայի հայրենիքի վրա, ողջ աշխարհի առաջավոր մարդկության հայրենիքի վրա—գերմանական ֆաշիզմի կրնկի տակ հեծող բազմամիլիոն ժողովրդի հույս ու ապավեն երկրի՝ ՍՍՌՄ-ի վրա։

Իսկ ինչպես են տրամադրված Արևմուտքի մտքի ու գրչի մարդիկ ՍՍՌՄ-ի վրա ավազակային հարձակման այս վերջին ակտի նկատմամբ։ Հակաֆաշիստ, ռևոլուցիոն բոլոր գրողների վերաբերմունքը ՍՍՌՄ-ի վրա հարձակում գործելու նկատմամբ, ինչպես միշտ, այժմ ևս «այնպես է, ինչպես ռևոլուցիոնների ու կոմունիստի վերաբերմունքը» (Հ. Բարբյուս)։

«Ամեն մի գրող,—գրում է գերմանացի ռևոլուցիոն աքսորական Բարտա

[1] «Գրական թերթ» № 20, 1934։

Լասկը,—ում համար թանգ է մարդկային կուլտուրան, պետք է կանգնի բանվոր դասակարգի և ՍՍՌՄ-ի կողմը, պետք է գործադրի բոլոր ուժերն արթնացնելու ժողովրդական մասսաներին։ Խոսքով ու գործով, գրչով ու զենքով մինչև արյան վերջին կաթիլը դեպի ՍՍՌՄ-ի պաշտպանությունը»[1]։ Գերմանացի կին գրող Աննա Զեգերսը կուլտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսում հայտնել է. «Եթե պատերազմ սկսվի ՍՍՌՄ-ի դեմ, ամեն մի օրինավոր մարդու պարտականությունը պարզ ու որոշակի է՝ կանգնել ՍՍՌՄ-ի կողմը և պաշտպանել նրան բոլոր ուժերով»[2]։

Այդպես և Արևմուտքի աշխատավոր ժողովուրդները, մտքի մշակների հետ միասին, հակված են մեր կողմը։ Այդ մասին վկայում են գերմանական մարդասպանների բանակը լքած ու մեր կողմն անցած օդաչուները, զինվորները։ Արևմուտքի առաջավոր մարդկության ատելությունը իր ուժգնությանն է հասել վերջերս, երբ Հիտլերը խախտելով պետական, քաղաքական, միջազգային, մարդկային բոլոր օրենքները, ավազակային հարձակում է կազմակերպել ՍՍՌՄ-ի վրա։ Այն գրողները, որոնք խոսքով ու գրչով էին պայքարում, այժմ գրիչը փոխարինել են զենքով։ Ռևոլուցիոն գրող Վիլլի Բրեդելը մի քանի տարի առաջ Համբուրգի բանվորների անունից ասել է. «Եթե ՍՍՌՄ-ի վրա հարձակում լինի, մենք չենք խնայի մեր արյան վերջին կաթիլը ՍՍՌՄ-ն պաշտպանելու համար». իսկ վերջերս սովետական գրողների միտինգում արտասանած իր կրակոտ ճառում նույն Բրեդելը հայտնել է. «Սովետական Միությունը մինչև վերջին բոպեն պայքար է մղել խաղաղության համար։ Հիտլերը լկտիաբար խախտեց պայմանագիրը։ Սակայն երբեք նրան չի հաջողվի խախտել սովետական և գերմանական ժողովուրդների բարեկամությունը, այդ երկրների աշխատավորության բարեկամությունը։ Հանձին Կարմիր Բանակի, գերմանական ֆաշիստական բանակը կհանդիպի այնպիսի մի ուժի, որը կոչնչացնի կապը կտրած ագրեսորներին։ Իմ տեղը, սովետական գրողի փոխարեն, սոցիալիստական բանակի շարքերումն է»[3]։

Արևմտյան Եվրոպայից բազմաթիվ հեռագրեր ու նամակներ են ստացվում առաջավոր գրողներից ու գիտնականներից, որոնք դատապարտելով ֆաշիստական ագրեսիան, անարգանքի սյունին են գամում աշխարհակալական զգացումներով հարբած Հիտլերին։ Նրանք իրենց սերն ու վստահությունն են հայտնում մեր բանակի, մեր ուժի, հաղթանակի նկատմամբ։ Գերմանացի տաբագիր, հռչակավոր ռևոլուցիոն գրող Լիոն Ֆոյխտվանգերը Ամերիկայի Միացյալ Նահանգներից ՏԱՍՍ-ի թղթակցին ուղղած իր մի նամակում գրում է. «Մենք զայրացած ենք ֆաշիստների կողմից սովետական ժողովրդի վրա կատարված հարձակումից։ Մենք գիտենք, որ այդ հարձակման խելացնորությունն ավելի մեծ է, քան նրա նենգությունը։ Խելագար ֆաշիստներն այժմ կռվի են հրավիրել այնպիսի հակառակորդների, որոնք նրանցից գերազանցում են իրենց թվով, համոզմունքներով և իրենց միասնությամբ։ Այժմ ֆաշիստներին վերջ կտրվի (ընդգծումը մերն է. Ա. Ա.)։ Մեզ

---

1 «Գրական թերթ» № 20, 1934։
2 Նույնը։
3 «Սովետական Հայաստան» № 149, 1941 թ.։

համար Ամերիկայում այդ պատերազմն ունի ուրախալի մի հետևանք ևս։ Հիտլերի բարեկամները և Սովետական Միության թշնամիները փորձում էին ամերիկացիներին հավատացնել, թե սովետական քաղաքացիներն ըստ էության նույնպիսի մարդիկ են, ինչպես ֆաշիստները և հետապնդում են նույն նպատակները։ Այժմ այդ տեսակ «ինֆորմացիա» տարածող անձանց զենքը խլված է նրանց ձեռքից։ Ամերիկայում այնքան արագորեն չեն գործում, ինչպես այդ մասին մտածում են Մոսկվայում. բայց դրա փոխարեն այստեղ գործունակություն են ցուցաբերում։ Եվ հենց որ նոր կարծիքն իր համար ճանապարհ կհարթի, նացիոնալ-սոցիալիստներին ոչնչացնելու համար կուղարկվի ավելի գործոն զենք, քան մինչև այժմ։ Պարզ է, որ այս պատերազմը կատաղի կլինի և ծանր հետևանքներ կունենա, բայց մենք, որ ճանաչում ենք սովետական ժողովրդին, համոզված ենք, որ ուժեղ, իմաստուն առաջնորդի ղեկավարությամբ և անգլո-սաքսոնական երկու մեծ ժողովուրդների հետ դաշինք կնքած սովետական ժողովուրդը առ միշտ կոչնչացնի նացիոնալ-սոցիալիստներին»[1]։

Իսկ ֆրանսիացի գրող Ժյուլ Ռոմենը ՏԱՍՍ-ի թղթակցին հայտարարել է իր պատրաստակամությունը դուրս գալու և մարտիկի պես կռվելու ֆաշիզմի դեմ. «Ներկայումս խոսքը վերաբերում է այն բանին, որ բոլորս միասին դուրս գանք մարդկության թշնամու դեմ և ջախջախենք նրան...»։

Նման նամակներ են գրել և հայտարարություններ արել ամերիկյան գրող Դրայզերը, Ալբերտ Ռիս Վիլյամսը և ուրիշները։

Ֆաշիստական կլիկի այս հարձակումը միայն արագացրել է ֆաշիստների մահը։ Անարդարացի այս պատերազմում կկործանվի ֆաշիզմը, որովհետև ֆաշիզմի կործանումը «ենթակա է ֆիզիկայի անվերանալի օրենքին — որքան ներքև է ընկնում ծանրությունը, այնքան արագ է ընկնում նա» (Գորկի)։ Պատմության կողմից մահվան դատապարտված ռեակցիոն ֆաշիզմը կջախջախվի Լենինի—Ստալինի ձեռքով շարժվող լոկոմոտիվի անիվների տակ։ Կխորտակվի իմպերիալիզմի վերջին վիժվածք ֆաշիզմը, և ողջ աշխարհում կծածանվի ազատության դրոշը։

---

1 «Սովետական Հայաստան» № 154, 1941 թ.։